

ԿԱՐԾԻՔ

**Լիանա Սերժիկի Արզումանյանի «Ճանաչողական-
հաղորդակցական մոտեցումը
բժշկական մասնագիտական անգլերեն բառապաշարի
ուսուցմանը» թեմայով թեկնածուական ատենախոսության՝
ներկայացված
ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա»
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ**

Ժամանակակից մասնագիտական հաղորդակցությունն արմատապես տարբերվում է այն մոդելից, որը գոյություն ուներ նույնիսկ երկու-երեք տասնամյակ առաջ: Եթե նախկինում մասնագիտական լեզվի տիրապետումը հիմնականում նույնացվում էր տերմինաբանական ճշգրտության, փաստերի ճիշտ ներկայացման և ձևական գրավոր խոսքի կարողության հետ, ապա այսօր այդ մոտեցումն ակնհայտորեն անբավարար է: Մասնագետից պահանջվում է ոչ միայն «ճիշտ խոսել», այլև հասանելի, ճկուն, իրավիճակին համապատասխան և էթիկապես ճիշտ ձևով հաղորդակցվել տարբեր դերակատարների հետ:

Այս փոփոխությունն առավել ընդգծված է բժշկության ոլորտում, որտեղ հաղորդակցությունն այլևս չի սահմանափակվում մասնագիտական ներհամակարգային շփմամբ (բժիշկ-բժիշկ, բժիշկ-հետազոտող), այլ ներառում է նաև բժիշկ-հիվանդ, բժիշկ-հիվանդի ընտանիք, բժիշկ-միջգիտակարգային թիմ, բժիշկ-հանրային կառույցներ, բժիշկ-միջազգային մասնագիտական համայնք հաղորդակցությունները: Այս բազմաշերտ միջավայրում լեզվական սխալը կամ հաղորդակցական անհամապատասխանությունը կարող

է ունենալ ոչ միայն մասնագիտական, այլև բարոյական, հոգեբանական և երբեմն՝ կլինիկական հետևանքներ:

Հենց այս պայմաններում է, որ ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն՝ որպես տեսական և մեթոդական հիմք, որը հնարավորություն է տալիս միավորել լեզվի իմաստային, հոգեբանական և գործառութային կողմերը, ինչպես նաև ձևավորել արդյունավետ մասնագիտական հաղորդակցություն՝ հիմնված ըմբռնման, փոխըմբռնման և պատասխանատու լեզվական վարքի վրա:

Այս համատեքստում Լիանա Սերժիկի Արզումանյանի հետազոտության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և պայմանավորված է ապագա բժշկների մասնագիտական պատրաստման նկատմամբ ժամանակակից պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային կրթական տարածքին ինտեգրման և Բոլոնիայի գործընթացի դրույթների իրագործման պայմաններում: Մասնագիտական անգլերենի, մասնավորապես բժշկական տերմինաբանության իմացությունը կարևորագույն նախապայման է արդյունավետ մասնագիտական հաղորդակցության, ակադեմիական շարժունակության և ժամանակակից գիտական տեղեկատվության հասանելիության ապահովման համար: Միևնույն ժամանակ, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, «բժշկական բուհերում անգլերենի ուսուցման առկա պրակտիկան լիարժեքորեն չի ապահովում կայուն բառապաշարային և հաղորդակցական հմտությունների ձևավորումը, ինչը պայմանավորում է նոր մեթոդական լուծումների որոնման անհրաժեշտությունը»:

Աշխատանքում հստակ ձևակերպված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները և վարկածը, որոնք տրամաբանորեն փոխկապակցված են և հետևողականորեն բացահայտվում են հետազոտության ընթացքում: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմել են ճանաչողական լեզվաբանության, օտար լեզուների դասավանդման հաղորդակցական մեթոդիկայի, հոգեբանախոսության և մանկավարժության դրույթները, ինչը վկայում է իրականացված ուսումնասիրության միջառարկայական բնույթի մասին:

Հատուկ ուշադրության է արժանի ատենախոսության գիտական նորույթը, որը դրսևորվում է անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգի մշակմամբ, որտեղ ուսուցման միավորը ոչ թե առանձին բառը, այլ բժշկական հասկացույթն է: Հեղինակի կողմից հիմնավորվել է «բժշկություն» հասկացության դաշտի ուսումնասիրության նպատակահարմարությունը՝ որպես բժշկական մասնագիտական կրթական ծրագրերում սովորող ուսանողների ճանաչողական-հաղորդակցական կարողությունների ձևավորման միջոց: Ձևակերպված և հիմնավորված են ուսումնական նյութի ընտրության սկզբունքները, ինչպես նաև առաջարկվել է վարժությունների համալիր՝ ուղղված ընկալողական, վերարտադրողական և արտադրողական բառապաշարային հմտությունների զարգացմանը:

Ստացված արդյունքների հիմնավորվածությունը հաստատվում են հետազոտության համարժեք մեթոդների համալիրի կիրառմամբ, փորձարարական ուսուցման իրականացմամբ, տվյալների մշակմամբ և ատենախոսության հիմնական դրույթների փորձարկմամբ: :

Աշխատանքի խնդիրներն ընդգրկում են.

1. Տեսական գրականության վերլուծություն
2. Բժշկական բառապաշարի յուրացման ճանաչողական մեխանիզմների բացահայտում
3. Բժշկական բառապաշարի ուսուցման մեթոդիկայի մշակում
4. Գնահատման չափանիշների սահմանում
5. Վարժությունների համակարգի ստեղծում
6. Փորձարարական ուսուցման իրականացում և արդյունքների վերլուծություն:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության խնդիրներով, որոնց լուծումներն ատենախոսը ներկայացրել է աշխատանքի երկու գլուխներում: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և հավելվածներից:

Աշխատանքի առաջին գլուխը՝ վերնագրված «Մասնագիտական հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման հիմնախնդիրը բժշկական բուհում», կատարում է նախ և առաջ տեսական հիմք դնելու գործառույթ, այստեղ ատենախոսը ներկայացնում է իր հետազոտության սահմանները, ներկայացնում, թե.

- ինչ է «մասնագիտական հաղորդակցական կոմպետենցիան» բժշկության մեջ,
- ինչ պահանջներ են դրվում բժշկի լեզվական պատրաստվածության հանդեպ,
- ինչու ավանդական լեզվական ուսուցումը բավարար չէ ժամանակակից արդյունավետ հաղորդակցություն փրականացնելու համար:

Իր հետազոտության մեջ Լիանա Արզումանյանը նախ և առաջ քննում է Անգլերենը բժշկական նպատակներով /EMP (English for Medical Purposes) /դասընթացում հաղորդակցական կարողունակության ձևավորման հարցը և նշում, որ այն պայմանավորված է ժամանակակից բարձրագույն կրթության պահանջներով, որոնք բժշկական մասնագետից ակնկալում են ոչ միայն լեզվական գիտելիքներ, այլև արդյունավետ մասնագիտական հաղորդակցման ունակություն տարբեր իրավիճակներում: Մասնագիտական ուղղվածություն ունեցող օտար լեզվի ուսուցումը բժշկական բուհերում հիմնվում է LSP/ESP հայեցակարգի վրա և իրականացվում հաղորդակցական և ճանաչողական մոտեցումների համադրությամբ՝ ապահովելով լեզվի գործառութային, իմաստային և գործաբանական կիրառումը: Ատենախոսը նշում է, որ ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը նպաստում է ոչ միայն բժշկական բառապաշարի գիտակցված յուրացմանը, այլև ուսանողի՝ որպես հաղորդակցության սուբյեկտի ձևավորմանը՝ ապահովելով մասնագիտական լեզվի կիրառելիությունն իրական և մոդելավորված հաղորդակցական միջավայրերում:

Աշխատանքի 1.2. «Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման կիրառումը բժշկական բառապաշարի ուսուցման մեջ» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է հետազոտության **կենտրոնական գաղափարական առանցքը՝** ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը և ցույց տալիս, որ բառը ուսուցանվում է ոչ թե որպես նշան, այլ

որպես **հասկացույթ**, բառապաշարի յուրացումը կապված է մտածողության, ֆրեյմների և սցենարների հետ, և հաղորդակցական գործառույթը բառին իմաստ է տալիս: Մոդելային հիմնադրույթի շնորհիվ այն դուրս է գալիս մեթոդական «տեխնիկայի» մակարդակից և դառնում **տեսականորեն մտածված մոդել**: Ակնհայտ է դառնում, որ ընտրված մեթոդիկան պատահական չէ, այն բխում է լեզվի ճանաչողական բնույթից:

Առաջին գլխի հիմնական ձեռքբերումը 1.3.' «Անգլերեն բժշակական բառապաշարի յուրացման հոգեբանական և հոգելեզվաբանական դժվարությունները» ենթագլխում ներկայացված մասնագիտական բառապաշարի փուլային մոդելն է, որի առավելությունն այն է, որ այն ապահովում է բառապաշարի յուրացման ամբողջական, հաջորդական և գիտակցված գործընթաց: Այն համադրում է ճանաչողական և հաղորդակցական բաղադրիչները և համապատասխանում մասնագիտական ուղղվածություն ունեցող ոչ լեզվական բուհի ուսանողների կրթական պահանջներին:

Մոդելի կարևոր առավելությունն այն է, որ աշխատանքը բառապաշարի հետ իրականացվում է հստակ տարանջատված փուլերով՝ ընկալում → իմաստային վերլուծություն → հաղորդակցական կիրառում → վերահսկում և շտկում: Այսպիսի կառուցվածքը թույլ է տալիս խուսափել բառերի մեխանիկական յուրացումից և ապահովում է աստիճանական անցում՝ պարզ ճանաչումից դեպի խորքային իմաստավորում և վերջապես՝ նպատակային հաղորդակցական օգտագործում:

Այդպիսով, բառապաշարային գիտելիքը ձևավորվում է ոչ թե որպես մեկուսացված միավորների գումար, այլ որպես ֆունկցիոնալ համակարգ: Մոդելի կարևոր նորարարական կողմերից է մեթոդական կոմպրեսիայի կիրառումը, որի շնորհիվ բառապաշարը ներկայացվում է սեղմ, կենտրոնացված, սակայն ուսանողի համար ընկալելի և յուրացվող ձևով: Բառապաշարային-քերականական քարտերի, տեսողական ընդհանրացնող սխեմաների, օպերացիոն հենարանների օգտագործումը թույլ է տալիս նվազեցնել ուսումնական ծանրաբեռնվածությունը, բարձրացնել ընկալման արդյունավետությունը և խթանել կառուցվածքային մտածողությունը:

Մոդելը հենվում է ոչ միայն հաղորդակցական, այլև ճանաչողական ռազմավարությունների համակարգված կիրառման վրա: Երկրորդ փուլում իրականացվող իմաստային վերլուծությունը, դենոտատիվ և իրավիճակային կապերի բացահայտումը, համատեքստային կիրառման ուսումնասիրությունը նպաստում են բառի խորքային իմաստի ըմբռնմանը, բառերի միջև ներքին կապերի գիտակցմանը, անհատական բառապաշարային դաշտի ձևավորմանը:

Արդյունքում բառը չի մնում միայն հիշողության մակարդակում ուսանողի մոտ, այլ ներառվում է ուսանողի մասնագիտական մտածողության համակարգում:

Մոդելի երրորդ փուլում բառապաշարային գիտելիքը ներգրավվում է իրական կամ մոդելավորված հաղորդակցական խնդիրների լուծման մեջ: Սա թույլ է տալիս կապել բառի ընտրությունն իրավիճակային համատեքստի հետ, զարգացնել խոսքի պլանավորման հմտությունները, ավտոմատացնել բառապաշարային գիտելիքի կիրառումը: Այս մոտեցման շնորհիվ ուսանողը սովորում է ոչ թե «բառ», այլ մասնագիտական հաղորդակցական գործողություն:

Չորրորդ՝ վերահսկման և շտկման փուլը, մոդելի կարևոր առավելություններից է, քանի որ այն ձևավորում է ուսանողի մետալեզվական և ինքնավերլուծական կարողությունները: Բառապաշարային և քերականական նորմերի ստուգումը, արդյունքի համադրումը հաղորդակցական նպատակի հետ նպաստում են, ըստ ատենախոսության հեղինակի՝ լեզվական պատասխանատվության ձևավորմանը, սխալների գիտակցված շտկմանը, խոսքի որակի ինքնուրույն վերահսկմանը:

Ներկայացված մոդելը մշակված է՝ հաշվի առնելով ոչ լեզվական բուհի ուսանողների առանձնահատկությունները՝ սահմանափակ ժամանակային ռեսուրս, մասնագիտական ուղղվածություն և բարձր պահանջներ կիրառելիության նկատմամբ:

Այդ պատճառով մոդելը օպտիմալ է բժշկական և այլ մասնագիտական ոլորտների ուսանողների համար, քանի որ այն ուղղված է խոսքային գործողությունների հաջորդական ձևավորմանը, այլ ոչ թե տեսական լեզվաբանական գիտելիքի կուտակմանը:

Սա թույլ է տալիս մոդելը կիրառել ոչ միայն փորձարարական, այլև մասշտաբային կրթական գործընթացում: Բացի այդ, ինչպես նշում է հեղինակը, ներկայացված ռազմավարությունները կրում են համընդհանուր բնույթ և կարող են կիրառվել ցանկացած տեսակի տեքստի հետ աշխատանքի ընթացքում /էջ 49/:

Այսպիսով, առաջին գլխում իրականացված տեսական ընդհանրացումները, մոդելային լուծումները և ռազմավարական ձևակերպումներն ապահովում են այն գիտական հենքը, որի վրա երկրորդ գլխում ներկայացված մեթոդական համակարգը հանդես է գալիս ոչ թե որպես պատահական գործիքակազմ, այլ որպես հետևողականորեն կառուցված, տեսականորեն հիմնավորված և գործնականորեն կիրառելի ուսուցման մոդել: Աշխատանքի երկրորդ՝ «Անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման ինտերակտիվ մեթոդները» անվանմամբ գլուխը կատարում է ապացուցողական և կիրառական գործառույթ, այն ցույց է տալիս, որ առաջին գլխում ձևակերպված գաղափարները կիրառելի են, իսկ առաջարկվող մոդելն աշխատում է իրական ուսումնական միջավայրում:

Հեղինակն այստեղ հիմնավորում է, որ բառապաշարի յուրացումը ռազմավարական գործընթաց է, ոչ թե պատահական: Ատենախոսության ուժեղ կողմն այն է, որ ուսանողը ներկայացվում է որպես ակտիվ մտածող սուբյեկտ, իսկ ուսուցումը դառնում է կառավարվող և կանխատեսելի:

Լիանա Արզումանյանն այս գլխում քննարկում է ինտերակտիվ մեթոդների և տեխնիկաների կիրառությունը, ապացուցում, որ իր կողմից առաջարկված մոդելը ոչ միայն ճիշտ է, այլև աշխատող:

Այս գլխի առաջին ենթագլխում՝ «Ճանաչողական-հաղորդակցական ռազմավարություններն անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման մեջ» անվանմամբ ատենախոսը հիմնվում է ժամանակակից օտար և հայրենական մեթոդաբանական, լեզվադիդակտիկական և հոգեվեգվաբանական գրականության լայն շրջանակի վրա՝ նպատակ ունենալով տեսականորեն հիմնավորել անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման ռազմավարական կազմակերպման անհրաժեշտությունը: Ատենախոսի կողմից ուսումնասիրվել են հաղորդակցական մոտեցման հիմքերը (Littlewood, Thornbury, Hyland),

ուսումնական ուղղվածությունների տեսությունները (Rubin, O'Malley, Chamot, Nunan, Schmitt), ինչպես նաև ճանաչողական և վերճանաչողական ուղղվածությունների կիրառման մեխանիզմները մասնագիտական ուղղվածություն ունեցող օտար լեզվի ուսուցման մեջ (Skehan, Newby, Johns, Langacker): Հատուկ ուշադրություն է դարձվել նաև հիշողության, ասոցիացիաների և բառապաշարային տեղեկատվության մշակման հոգեբանական հիմքերին (Buzan, Solso, Anderson, Залеvская), ինչպես նաև հայ և ռուսաստանյան հեղինակների աշխատություններին (Ազիմով, Շչուկին, Շատիրով, Բերշադսկի և այլն), որոնք հնարավորություն են տվել հստակեցնել «լրառապաշարի հետ աշխատանքի ուղղվածություն» հասկացությունը և դրա բաղադրիչները EMP համատեքստում: Այստեղ Լ. Արզումանյանը բացահայտել է բժշկական բառապաշարի յուրացման ճանաչողական և հաղորդակցական մեխանիզմները, ձևակերպել ուղղվածությունների գիտականորեն հիմնավորված տիպաբանությունը և ստեղծել այն տեսական հենքը, որի վրա կառուցվում է հետագա մեթոդական մոդելն ու վարժությունների համակարգը:

Երկրորդ ենթագլխում ատենախոսության հեղինակը հիմնավորում է ինտերակտիվ ուսուցման անհրաժեշտությունը, ցույց տալիս, որ բժշկական մասնագիտական հաղորդակցությունը բնույթով ինտերակտիվ է, և այդ պատճառով լեզվի ուսուցումը չի կարող իրականացվել միայն վերարտադրողական կամ տեքստակենտրոն մեթոդներով: Ինտերակտիվ մեթոդները ներկայացվում են ոչ որպես տեխնիկական հնարք, այլ որպես հաղորդակցական և ճանաչողական պահանջներից բխող լուծում: Լիանա Արզումանյանը հստակ կապում է ինտերակտիվ մեթոդները ճանաչողական ուղղվածությունների, վերճանաչողական վերահսկման, հաղորդակցական նպատակների հետ՝ ցույց տալով, որ դրանք ծառայում են իմաստային մշակմանը, ինքնակարգավորմանը և բառապաշարային պատասխանատվության ձևավորմանը: Աշխատանքի ձեռքբերումներից է ինտերակտիվ մեթոդների և հնարքների համակարգի մշակումը և դասակարգումը: Հեղինակը ներկայացնում է կոնկրետ մեթոդական օրինակներ և ուսումնական սցենարներ, առաջարկում մեթոդների բազմաստիճան դասակարգում, ոչ թե թվարկում է մեթոդներ, այլ կառուցում է մեթոդական դաշտ: Լ. Արզումանյանը գրաֆիկների կիրառմամբ իրականացնում է փորձարարական ուսուցում՝ համեմատելով ավանդական և ինտերակտիվ մոտեցումների

արդյունավետությունը և փաստացի ցույց տալիս մեթոդական առաջարկների գործունակությունը: Վերաիմաստավորում է դասախոսի և ուսանողի դերերը Ատենախոսը հիմնավորում է, որ ինտերակտիվ ուսուցման պայմաններում դասախոսը հանդես է գալիս որպես

կազմակերպիչ, խորհրդատու, հաղորդակցական միջավայրի ճարտարապետ, իսկ ուսանողը՝ որպես գործող սուբյեկտ, որը պատասխանատու է իր լեզվական գործողությունների և արդյունքի համար:

Այսպիսով, այս ենթագլխում ատենախոսը ոչ միայն նկարագրում է ինտերակտիվ մեթոդները, այլև մշակում է ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա հիմնված կիրառական մեթոդական համակարգ, որն ապահովում է անգլերեն բժշկական բառապաշարի գիտակցված, խոսութային և հաղորդակցական յուրացումը:

Ենթագլուխ 2.3-ը՝ վերնագրված «Անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից և դրա հիմնավորումը» գիտականորեն հիմնավորում է, որ անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման համար մշակված ճանաչողական-հաղորդակցական մեթոդական համակարգն արդյունավետ է, մեթոդաբանորեն ամբողջական և կիրառելի իրական բուհական միջավայրում: Փորձարարական տվյալներն ապացուցում են, որ համակարգը նպաստում է ոչ միայն լեքսիկական գիտելիքների ձևավորմանը, այլև դրանց գործառական օգտագործմանը մասնագիտական հաղորդակցության մեջ: Մեթոդական համակարգն ապահովում է բոլոր տեսակի խոսքային գործունեությունների համաժամանակյա զարգացում, բարձրացնում է ուսանողների խթանը, ինքնուրույնությունը և վերլուծական մտածողությունը՝ պատրաստելով նրանց միջազգային մասնագիտական հաղորդակցությանը:

Կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման արդյունավետությունն էապես բարձրանում է այն դեպքում, երբ հաղորդակցական մոտեցումը համադրվում է ճանաչողական մոտեցման հետ: Այդ համադրությունը թույլ է տալիս վերաիմաստավորել EMP դասընթացի բովանդակությունը և կառուցվածքը՝ ուսուցման

հիմնական միավոր դարձնելով ոչ թե առանձին բառը կամ նախադասությունը, այլ բժշկական հասկացությամբ՝ իր իմաստային, ասոցիատիվ և գործառության դաշտով:

Հետազոտության արդյունքներն ապացուցում են, որ բժշկական բառապաշարի յուրացումն առավել արդյունավետ է, երբ այն իրականացվում է համապատասխան մասնագիտական հասկացության աշխարհի շրջանակում: Ուսանողները յուրացնում են ոչ միայն բառերը, այլև այն իմաստային և արժեքային համակարգը, որի մեջ գործում են անգլախոս բժիշկները: Այդ մոտեցումն ապահովում է լեզվական նյութի գիտակցված ընկալում, ճիշտ ընտրություն և նպատակային կիրառություն հաղորդակցական իրավիճակներում:

Լիանա Արզումանյանի ատենախոսության եզրակացությունները լիարժեքորեն ամփոփում են կատարված աշխատանքը:

Հետազոտության հիմնական արդյունքները և ձեռքբերումներն ամփոփված են ատենախոսության եզրակացություն բաժնում: Ատենախոսը եզրահանգում է, որ բժշկական բառապաշարի յուրացումն առավել արդյունավետ է, երբ այն իրականացվում է համապատասխան մասնագիտական հասկացության աշխարհի շրջանակում: Ուսանողները յուրացնում են ոչ միայն բառեր, այլև այն իմաստային և արժեքային համակարգը, որի մեջ գործում են անգլախոս բժիշկները: Այդ մոտեցումն ապահովում է լեզվական նյութի գիտակցված ընկալում, ճիշտ ընտրություն և նպատակային կիրառություն հաղորդակցական իրավիճակներում:

Ճանաչողական-հաղորդակցական ուսուցումը պահանջում է հստակ կառավարվող, նորմավորված և պրակտիկային ուղղված մեթոդական համակարգ, որը համապատասխանում է ճանաչողական հոգեբանության սկզբունքներին և հաշվի է առնում տեղեկատվության ընկալման, մշակման և հիշողության մեխանիզմները:

Ատենախոսության գրականության ցանկը պարունակում է 194 անուն հայրենական և արտասահմանյան հետազոտողների հիմնարար աշխատանքներ՝ մենագրություններ, հոդվածներ, առցանց և տպագիր, այլ հրապարակումներ՝ տպագրված միջազգային

հեղինակավոր գիտական հանդեսներում և միջազգային գիտաժողովների ժողովածուներում, որոնք համակողմանի են քննարկում հետազոտության թեման և ապահովում խնդիրների լուծումը: Այն նաև ընգրկում է երեք հղում՝ բժշկական ֆիլմերին:

Ատենախոսության հավելվածները կարևոր գործառույթ են կատարում. դրանք ներառում են վարժություններ, ինչպես նաև դրանց կատարման փուլեր և բացատրություն: Այս բաժնում ներկայացված նյութը կարող է կիրառվել ՀՀ բժշկական բուհերում՝ մասնագիտական անգլերենի դասընթացի շրջանակում:

Աշխատանքում Լ. Արզումանյանը կիրառում է աղյուսակներ, գծագրեր ու դիագրամներ, ներառյալ, գծապատկերներ, որոնք բարդ տեղեկատվությունն ավելի հասանելի են դարձնում՝ տեսողականորեն ցուցադրելով կատարված հետազոտության միտումները, հարաբերությունները և գործընթացները: Սա ոչ միայն նպաստում է ուսումնասիրվող երևույթների ավելի լավ ընկալմանը, այլև ամրապնդում է փաստարկը՝ եզրակացությունները դարձնելով ավելի համոզիչ: Տվյալների վիզուալիզացիան ատենախոսության մեջ աջակցում է նյութի տրամաբանական ներկայացմանը՝ հետազոտությունն ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելով ավելի լայն լսարանի համար:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 6 հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Այնուամենայնիվ, կան որոշ դիտարկումներ, որոնց ևս կուզենայի անդրադառնալ:

1. Աշխատանքում մանրամասնորեն վերլուծվում են ուսումնական հաղորդակցական իրավիճակները, սակայն գրեթե չի դիտարկվում իրական կլինիկական հաղորդակցությունը որպես ինքնուրույն հետազոտական օբյեկտ: Լուսաբանված չեն բժշկի խոսքային պրակտիկաները սթրեսային պայմաններում (ժամանակի սղություն, ախտորոշման անորոշություն, կոնֆլիկտային իրավիճակներ), իշխանական ասիմետրիան «բժիշկ-հիվանդ» հաղորդակցության մեջ, կամ ինստիտուցիոնալ արձանագրությունների և իրավական պատասխանատվության ազդեցությունը բժշկական խոսքի վրա: Այս ուղղության զարգացումը կապահովեր ատենախոսության ավելի սերտ կապը իրական բժշկական պրակտիկայի հետ և կուժեղացներ դրա կիրառական արժեքը:

2. Ժամանակակից բժշկական հաղորդակցությունը ոչ միայն երկխոսություն է, այլև ինստիտուցիոնալ խոսույթ, որտեղ լեզուն կարգավորվում է արձանագրություններով, էթիկական նորմերով և ռիսկերի գործոններով: Եթե աշխատանքում բժշկական հաղորդակցությունը դիտարկվեր նաև այս տեսանկյունից, ապա հնարավոր կլիներ ցույց տալ, թե ինչպես են ինստիտուցիոնալ սահմանափակումները ձևավորում բժշկի խոսքը, բացատրել, թե ինչու որոշ հաղորդակցական ձևեր թույլատրելի են, իսկ մյուսները՝ ոչ, վերլուծել լեզվական ընտրությունների կանխարգելիչ բնույթը (օրինակ՝ անորոշ ձևակերպումներ, մեղմացնող ռազմավարություններ և այլն):

Այս մոտեցումը կխորացներ ճանաչողական-հաղորդակցական մոդելի տեսական հիմքը և այն կտեղափոխեր ավելի լայն՝ խոսութային և սոցիալ-ինստիտուցիոնալ հարթություն:

3. Ատենախոսն իր աշխատանքում նշում է. «Անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման տեսանկյունից բրիտանացի կամ ամերիկացի բժիշկների հայեցակարգային աշխարհի պատկերն էականորեն տարբերվում է հայ բժիշկների հայեցակարգային աշխարհի պատկերից: Ըստ էության, ապագա բժիշկները, նախքան անգլերեն բժշկական ընկալողական (ռեցեպտիվ) կամ արտադրողական (պրոդուկտիվ) բառապաշարի ուսումնասիրությանն անցնելը, պետք է ծանոթանան բրիտանացի բժիշկների հայեցակարգային աշխարհի պատկերին/էջ 33/: Իսկ հայեցակարգային աշխարհի պատկերն անհնար է հասկանալ առանց միջմշակութային բաղադրիչի ուսումնասիրության: Այն աշխատանքում հայտարարվում է, սակայն վերլուծվում է ընդհանրացված մակարդակում: Չի ներկայացվում միջմշակութային սխալների տիպաբանություն (գերքաղաքավարություն, թերբացատրություն, կեղծ հանգստացում), հիվանդի ակնկալիքների տարբերությունները անգլախոս բժշկական մշակույթում, և այլն: Այս բաղադրիչի զարգացումը կօգներ ցույց տալ, որ բժշկական մասնագիտական անգլերենը միայն լեզվական հմտությունների համակարգ չէ, այլ նաև մշակութային միջնորդություն իրականացնող գործիք:

4. Աշխատանքը կենտրոնացած է ավանդական լսարանային և բանավոր հաղորդակցության վրա, մինչդեռ ներկայումս արագ տեմպերով զարգանում է թվային բժշկական հաղորդակցությունը, որը հարստացրել է բժշկական մասնագիտական բառապաշարը նոր եզրերով, քանի որ հեռաբժշկությունը, էլեկտրոնային բժշկական քարտերը, հիվանդի հետ ասինխրոն գրավոր և արհեստական բանականությամբ աջակցվող հաղորդակցությունը դարձել են իրականություն և ժամանակակից բժշկության անքակտելի մաս: Բացի այդ, թվային բժշկական հաղորդակցության ուսումնասիրությունը կխորացնեն աշխատանքի միջգիտակարգային բնույթը, կապահովեն դրա համապատասխանությունը ժամանակակից բժշկական կրթության պահանջներին և կուժեղացնեն հետազոտության կիրառական նշանակությունը, հատկապես ապագա բժիշկների մասնագիտական պատրաստվածության տեսանկյունից:

Այս ուղղության ընդգրկումը կթույլատրեր դիտարկել բժշկական մասնագիտական անգլերենը ոչ միայն որպես դասավանդվող առարկա, այլ որպես դինամիկ համակարգ, որը զարգանում է տեխնոլոգիական, ինստիտուցիոնալ և հաղորդակցական փոփոխություններին համընթաց:

5. Ատենախոսության մեջ կան նաև որոշ վրիպակներ.

Հիմնական աշխատանքում՝

Էջ 38, 5-րդ պարբերություն՝ «Что касается изучению», Էջ 93, 3-րդ պարբերություն, подчеркивается значения Էջ 103, 3-րդ պարբերություն՝ «медицинской лексике»:

Սեղմագրում՝

Էջ. 11, երկրորդ պարբերություն, երկրորդ տող, հարկավոր է ձևակերպել «определяются», Էջ 17, 4-րդ պարբերություն՝ «концептуальной картины»

Չնայած նշված դիտարկումներին՝ Լ.Ս. Արզումանյանն իր թեկնածուական աշխատանքը շարադրել է գիտական պատշաճ լեզվով, հասկացական գործիքակազմի պահպանմամբ և ճշգրիտ օգտագործմամբ: Աշխատանքի ձևավորումը, բովանդակությունը,

ստացված արդյունքները լիարժեքորեն բավարարում են թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջները:

Ատենախոսությունն արժեքավոր ներդրում է ժամանակակից լեզվակրթության մեջ՝ իր գիտական նորարարություններով և գործնական կիրառականությամբ: Հետազոտությունը համապարփակ և արդյունավետ է ինչպես ՀՀ բուհերի, այնպես էլ միջազգային մակարդակով լեզվակրթության գործընթացի բարելավման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, եզրակացնում եմ, որ ատենախոսի **«Ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը բժշկական մասնագիտական անգլերեն բառապաշարի ուսուցմանը»** ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Լիանա Սերժիկի Արզումանյանն արժանի է իր կողմից հայցած՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Լուսինե Հրանտի Ֆլյան
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



Հյուսիսային համալսարանի ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով
պրոռեկտոր

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմախոս

բանասիրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլյանի ստորագրությունը

Աստղիկ Աշոտի Աբրահամյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Հյուսիսային համալսարանի գիտքարտուղար

08.01.2026